

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Маск».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:



ԲՈՎԱՆՊԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաւառացի երկուս-
սարդուկներ. Ռուսաց թաւարժ. Դամակ Նոր-Բա-
յազետից. Դամակ խզիւրից. Ներքին լուրեր. —
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լրտեսութիւնը Գերմա-
նիայում. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՐԵՐ. —
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՆԱՌԱՅԻ ՆԵՐՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆ

Առաւարակ մեր գաւառական քաղաքները
կեանքը չունի աշխարհի մեծ հոսանք, չունի շատ
տարրերից բաղկացած հասարակութիւն, որի մէջ
ընկնելով երկուստեք կարողանար գնալ միշտ
մի և նոյն ուղղութեամբ, ունենալ իր հաստատ և
որոշ ուղղութիւնը:

Մեր կեանքի և դպրոցի մէջ կայ բաւական
մեծ տարբերութիւն: Գուրու է գալիս երկուստեք
մի մի օր և է միջնակարգ կամ բարձրագոյն
դպրոցից, ընկնում է մեր գաւառներից մէկի մէջ,
սպորում է այդտեղ երկար տարիներ, — և դրա հե-
տեանքը այն է լինում, որ նա դառնում է իր
չընկալած ուղիների նման: Այդ շատ բնական բան
է մեր գաւառական կեանքի հանգամանքների մէջ.
չը կան այդ գաւառների մէջ ոչ մասնակի հասա-
րակական գրադարաններ, ոչ դպրոցացած չընթա-
նաւի մեր շրջանից չը կայ ոչ մի բան, որ կարո-
ղանայ նպաստել երկուստեք միմյանի կարողու-
թեան, նրա քննադատական մտքի զարգացումը:
Իսկ, դրա հակառակը, կայ ամեն ինչ, որը կարող
է նպաստել նրա լուծվելուն և ոչնչանալուն, ան-
բարոյականանալուն:

Երբ երկուստեք մտնում է կեանքի մէջ, նա
պատահում է բոլորովին տարբեր լրանքի, քան
իդ դպրոցում: Ստանդարտութիւն, խաղաղութիւն,
մասնութիւն, բարձրագոյն, դպրոցիւն և ուրիշ
հազար ու մի այդ տեսակ կեղծոտութիւններ են
նրա ամեն օրվան տեսածն ու լսածը: Գալոցից
մնացած շատ քիչ, երբեմն էլ շատ աղօտ աւան-
դութիւններն ու յիշողութիւններն ասում են տար-
բեր բաներ, իսկ կեանքը իր ամենօրեայ կենդա-
նի գործողութիւններով և փորձերով համարեւ
միշտ հաստատում է տարբեր լրանքի, բայց որով-
հետեւ կենդանի գործողութիւնների և փորձերի
ազդեցութիւնը աւելի զօրեղ է լինում, դրա հա-
մար էլ երկուստեք ստիպւած հետեւում է կեան-
քի հոսանքին, մասնաւոր երբ այդ մարդը դպրո-
ցական չընթանում ստացած չէ լինում այդքան բա-
րոյական դպրոցիւն, որ կարողանար գտնել մի քիչ
դիմադրել այդ հոսանքի գործողութիւնը: Այն հասա-
րակութիւններ, որոնց մէջ կարելի է ապրել աւան-
դութեամբ, բայց մեր, հայերի, բոլոր հասարակու-
թիւնները, կարծես, ունեն մի փչացող, մի կըր-
ծող, ամեն ինչ քայքայող ազդեցութիւն, որին
դիմադրելը, որի հետ մղադառնելը շատ դժուար է
և ահա մի քանի երկուստեքներ, որոնց մէջ քիչ
թէ շատ զարգացել է կրթական միտքը, սկսում
են գործ դնել զանազան միջոցներ այդ կուր-
սարեւ ազդեցութեան տակ չընկնելու համար,
սկսում են բոլորովին աւանդաբան հասարակու-
թիւնից և մինչև անգամ ընտանիքից ու պարա-
պիւ միայն գրել կարդալով կամ երբեմն էլ եր-
կար խօսել և վիճել ընկերների հետ մի օր և է
բանի մասին, կազմել ընկերական երեկոյաներ,
երկուստեքական թատերեր, գրականական ե-
րեկոյաներ երբեմն մի ընկերոջ, երբեմն միւսի տանը
և այլն: Այդ միջոցների նպատակն է—հետեւ
մնալ հասարակութեան փչացող ազդեցութիւ-
նից:

Կասկած չը կայ, որ գոյնը արժանի են այն
մարդիկ, որոնք միջոցներ են որոնում և գործ դե-
նում իրանց մտաւոր և բարոյական ապահովու-
թեան համար, բայց (կարծես ինձ հետ ամեն
հասկացող մարդ համաձայն կը լինի այս կէտով),

աւելի փառաբանութեան արժանի են այն մար-
դիկ, որոնք չեն բաւականանում միայն և ոչնչ-
ծառայելու, այլ իրանց նմանների մասին ևս մը-
տածում են ու գործում: Հատկապէս համոզված են,
անշուշտ, որ այս այսպէս է: Իսկ եթէ այդ խոր,
խակաւ համոզմունք է, որեւէմ դրան կը հետևի
և գործը, որովհետեւ գործը ոչ այլ ինչ է, եթէ ոչ
ձշմարիտ համոզմունքների արտայայտութիւն: Կար-
ծեմ բոլոր զարգացած հայ երկուստեքները լա-
ւա հասկացել, որ մեր կիսանաւական կեանքը
անտանելի է, որ այդ կեանքը վայել է միայն ա-
նասուններին և Սֆրիկայի ներքիններին, բայց մի-
այն հասկանալը և զգալը բաւական չէ, պէտք է
աշխատել դրանից աւելի լաւ կեանք գտնելու,
այսինքն պէտք է մեր կեանքը աշխատել ինք-
նուր աւելի լաւացնել: Ինչն իրան ոչինչ բան եր-
բէք չէ կարող աշխարհիս երեսին կատարել:

ՌՈՒՍԱՅ ԹԱՏՐՈՆ

Կիրակի օր, մայիսի 17-ին, Թիֆլիսի թատրո-
նում տ. Սալիխան խաղում էր Ա. Գլուշկոյի հան-
րածանօթ «Կամիլա» օպերան: Գլուշկոյի մէջ
Գլուշկոյ այդ գրաւորի մէջ շատ խիստ կերպով է
վերաբերվում իր հերոսուհուն: Ընկած կինը սիրոյ
ներգործութեան տակ թողնում է իր անառակ
կեանքը և սկսում է ուրիշ կեանք: Բայց չընկալ-
ած հանգամանքների և հասարակութիւնը այն-
քան անողորմ են, որ չեն կամենում մոռանալ
անցեալը և անողորմաբար յետ են հրում նրան
դէպի առաջիկայ անողորմ: Երկուստեք անգամ կար-
ծես կեանքը սկսում է փառալ հերոսուհուն: Մար-
դարտային, մարդիկ կարծես հաշտվում են նրա
հետ, բայց այս անգամ ընտելիւն է ապստամբ-
վում: «Չը կայ թողութիւն քեզ այս աշխարհում»,
կարծես ասում է նա, միայն մահը կարող է հաշ-
տեցնել քեզ մարդկանց հետ...»: Գլուշկոյ ահա-
գին նիւթ է տալիս Մարդարտայի դեր կատարող
դերասանուհուն, անառակ կեանք, սիրոյ առաջին
զգացմունքներ ամենօրեայ օրդիայի մէջ, այդ օր-
դին թողնելու ցանկութիւն, անառական սեր,
ներքին կուր և դժգոհութիւն յանուն այդ սիրոյ
և վերջապէս մահ,—յաջորդաբար հետեւում են
միմյանից:

Գերասիմուհին պէտք է ունենայ մեծ տակաւ
չափաւորութեան հասկացողութիւն, որ հարկաւոր
աւանանքներից դուրս չը գայ: Սալիխան այդ բո-
լորն ունի. բացի դրանից նա ամենամանրակրկիտ
կերպով մշակել էր դերը, այնպէս որ հանդիսակա-
ններն նա ներկայացնում էր մի ամբողջ վերջաց-
րած ընտելութիւն: Միայն, ինչպէս երևում էր,
տաղանդաւոր տիկինը այս երեկոյ տրամադրված
չէր խաղալու. խիստ դժուարաբան տեսարան-
ները անցնում էին սառն կերպով, ինչպէս, օրի-
նակ, երբորդ գործողութեան մէջ, իր սիրելիների
հօր հետ բացատրութեան ունեցած ժամանակ,
բացատրութեան պէտք է համարել վերջին գործ-
ողութիւնը, երբ նա թողալտից մոռնում է: Տի-
կին Սալիխան մոռնում է շատ պարզ կերպով
առանց որ և է ցնցումներով, և առանց կեղծելու:
Նա հոգին աւանդում է, հանդիսակաւորները բոլո-
րովին մոռանում են, որ ինքն իրան են մոռնող
տեսնում,— և երբ վարդապետը ընկաւ, բաւական եր-
կար ժամանակ թատրոնում մեռելային լուծվում
էր տիկնոջ և ապա միայն ուշի եկած հասա-
րակութիւնը թողալտից դաշխել ծափահարու-
թեամբ: Միւս մասնակցողները՝ այս երեկոյ բա-
ւական թող էին:

Nemo

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՔԵՏԻՑ

Մայիսի 13-ին

Հայոց ուսումնարանների փակվելուց առաջ,
Նոր-Բայազետի հասկացող դասի մէջ մէկ լաւ
սովորութիւն էր մտել, այն է՝ հանգուցեանքների
հոգուն ք եւ և իս տալու փոխանակ, մի յայտնի

գումար փող էին նուիրում երկուս ուսումնարանի
օգտին, և այդ փողը տոկոսը համարվում էր մի
չքաւոր աշակերտի թոշակ, իսկ աշակերտը հան-
գուցեալի որդեգիր: Եւ այդպիսով երեք տարվայ
ընթացքում հաւաքվել էր մօտ 400 ռուբլի: Բայց
երբ ուսումնարանները փակվեցան, մեր միջոց
վերջացաւ այդ դեղեկի սովորութիւնը:

Այժմ ուրախ սրտով յայտնում ենք «Մշակի»
ընթերցողներին, որ նորից սկսվեցաւ այդ օգտա-
ւետ սովորութեան գործադրութիւնը: Օրերուս
վախճանված պ. Գալուշկան Գալուշկայի ժառանգ-
ները հանգուցեալի յիշատակին նուիրեցին տե-
ղիս երկուս ուսումնարանների օգտին 40 ռուբլի:
Ուսուցիչ ֆիլոսոֆ մի դասնական կարգաց
յիւնց, որ հանգուցեալը ուսումնասէր էր և սրա-
նից մի քանի տարի առաջ իր հանգուցեալ կնոջ
յիշատակին էլ դարձեալ 40 ռ. էր նուիրել ու-
սումնարանի օգտին: Ցանկանալի էր որ շատերը
հետեւին պ. Գալուշկայի բարի օրինակին: Բայց ա-
սում են, որ մեր քահանաներից շատերը հակա-
ռակ են այդ սովորութեան, որովհետեւ կարծում
են, թէ քեզիւր կարող է փրկել հանգուցեալի հո-
գին: Եւ այդ պարզ երեւոյ նրանից, որ չը նայե-
լով թէ տեղիս ինչ քահանաներ են ներկայ էին
յուզարակաւորութեան հանդիսին, բայց և ոչ մէկը
չը կամեցաւ խրատուսել պ. Գալուշկային և
յուզարդ ժողովրդին քեզիս կոչված անմիտ սով-
որութիւնը վերջացնելու:

«Մշակի» № 50-ում, Նոր-Բայազետից հաղոր-
դած լուրի մէջ տեղիս երկուս ուսումնարաննե-
րում սովորող աշակերտների և աշակերտուհիների
թիւն վերաբերեալ մի խոշոր սխալ էր մտել, այն
է՝ ուսումնարանի աշակերտների թիւը 129 է,
իսկ աշակերտուհիների թիւը 74, ընդամենը 203, իսկ
յիշեալ լուրի մէջ յայտնված էր, որ նրանց թիւը
400 էր:

Ս. Բ.

ՆԱՄԱԿ ԻԳՎԻՐԻՑ

Մայիսի 1-ին
Այժմ աւելի որոշ յայտնի են այն վեպները,
որ կրեց Սուրմալուն Արաքսի յորդանալու ու
սաստիկ անձրևների պատճառով. ուստի աւելորդ
չէ հաղորդել մի քանի մանրամասնութիւններ այդ
մասին: Ջրերի այսպիսի յանկարծակի յորդանալը
վարդաց չէր տեսնված: Արաքսը նախկին դերքից
չորս անգամ աւելի էր լայնացել: Սուրմալուն
անտառական դրութիւնը, որ սաստիկ ծանրացած
էր ժողովրդի վրա, այս պատահարից յետոյ մի-
անգամայն անտանելի դարձաւ: Փչացան ջա-
ղացիները, որի պատճառով աւելի սուղը 75 կո-
պեկից 1 ռ. 50 կոպեկի բարձրացաւ, բրինձը 1
ռ. 80 կոպեկից 3 ռ. 60 կոպեկի բարձրացաւ,
նոյնպէս և բարձրացան բոլոր կենսական պի-
տոյքների գները:

Երուսաղեմի քաղաքներից տաս վերստ
դէպի արեւելք իջած՝ Արաքսը դուրս եկաւ իր
ափերից և տասնամիւսիկ աւելի մեծացան այն
առուները, որոնք բաժանված են զանազան գիւ-
ղերի վրա. առուների մէջ ջուրը չը տեղաւորվելով
դուրս եկաւ և տարածվեց ցանաժ դաշտերի վրա և
սղմի տակ փչացրեց նոր ծած ցանքերը: Քիթի,
Արաքսի, Արիզամարտի, Արաքսի ցանքերի
մեծ մասը փչացան. Հիւսիսի գիւղը, Մարգարայի,
Գիւղայի և ուրիշ շատ գիւղերի ժողովուրդը, որոնց
անունները մի առ մի թւել երկար կը լինի,
բոլորովին յուսահատ դրութեան մէջ են, որովհե-
տեւ վերջինները ապաստարան ևս չունեն: Ջուրը
իջնելուց մի քանի օր յետոյ աւելի ունեցաւ անց-
նելու այդ դերքերով և ճիշդ աւերակների տպա-
ւորութիւն ստացաւ: Փչացան ջրաղացները և շատ
մարդկանց ապաստարանները, փչացաւ միակ կա-
մուրջը, հեռագրական հաղորդակցութիւնը ընդ-
հատվեցաւ, փոստային ապահով հաղորդակցու-
թիւնը մի քանի օր է միայն, որ սկսվել է, Ա-
րաքսի մօտի միակ պարօմը նոյնպէս ջրին զոհ
գնաց, մէկ խօսքով միւս ափի հետ հաղորդակ-
ցութիւնը միանգամայն ընդհատվեցաւ:

Վրանաբնակ քիւրդերը տարածվել էին Արաքսի
կանաչադարձ եղերքի վրա, իրանց հօտերը արա-
ծացնելու համար, բայց Արաքսի յանկարծակի
յորդանալը բաղձաթիւ բերեց զրկեց իրանց հօ-
տերից և վրաններից, մի խօսքով այն ամենից,
ինչ որ քրդի կեանքի միակ ապահովութիւնը և
հարստութիւնն է կազմում: Պէտք է ասել որ,
բարեբաղդաբար, շատ քիչ մարդիկ զոհ գնացին,—
ընդամենը մէկ քիւրդ կին, մէկ տղամարդ և մէկ
թուրք ուղտապան, իսկ նիւթական վեպը շատ
է: Արեւմտական ճանապարհի վրա Մարգարայի
փոստային կայարանը և պահականոցը նոյնպէս
ջրին զոհ գնացին. պահականոցը գիւղեր ժամա-
նակ ջուր լցվեցաւ, և հաղիւ պահապանները կա-
րողացել են սղոր ձիւների վրա նստելով փախ-
չել. նրանց իրերը բոլորովին կանահետաւային, եթէ
Մարգարա գիւղի հայերը չը լինէին: Եթէ չը լի-
նէին մարգարացի հայերը զուցէ երկար ժամա-
նակ հեռագրական և փոստային հաղորդակցու-
թիւն չը լինէր Սուրմալունի և Երեսնի մէջ:

Բնութիւնը վաղուց թշնամացել է Սուրմալունի
հետ,—լեռնային մասում այս օտար շատ քիչ
ցանք արեցին, որովհետեւ յորդ անձրևները մի քա-
նի օր է միայն որ դարձրել են. անցեալ աշնա-
նը լեռներում անձրևը այնպէս յորդ էր, որ շատ
գիւղերում կիւսած և ծառակեր թրջվելուց ծե-
ցին և մեծ վնաս պատճառեցին. դաշտային մա-
սումն էլ «չախտա» (ցորտահարութիւն) կոչված հի-
ւանդութիւնը բաժաններից մօտ 70% փչացրեց:
Ձմեռը այնքան սաստիկ եղաւ, որ շատ անա-
տաններ իրանց ցանքից երկու անգամ աւելի
թանգ նստեցին իրանց տերերի վրա,—մէկ չա-
թիւն յարդը 15—18 ռուբլի ծախվեցաւ, որը
սովորաբար 4 ռուբլուց աւելի չէր ծախվում:
Այսպէս հարուստները միայն կարողացան պահել
անասուններին, իսկ աղքատների անասունները ո-
րոնք աւելի մեծամասնութիւն են կազմում, բոլոր-
ովին կմալը դարձած դարձը ընկան, և այժմ
բոլորովին անպէտք են թէ վարի, թէ մնացել և
թէ կաթնատուութեան համար: Բարձրակը՝ որ ամե-
նապարդիւնաւոր բերքն է Սուրմալունի շատ քիչ
ցանկից այս տարի, որովհետեւ տղմով ծածկված
հողերը չուտով չորացան: Լուր էր հասել այս-
տեղ, որ Նախիջվանի կողմերում, Պարսկաստանի
սահմանապահների մի մեծոք խումբ անյայտա-
ցել է յորդացած ջրի մէջ: Թէ որքան ճիշդ է այդ
լուրը,—այժմ դրականապէս ասել չէ կարելի:

Յ. Խ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳԻՑ մեղ գրում են, որ Բագուի քա-
հանայ Գրիգոր Գրիգորեանցի «Միտակ» լրակա-
տար երգարանի 5-րորդ հատորը, արդէն մատու-
տակ է և շուտով լոյս կը տեսնի:

ԹԻՖԼԻՍԻ դուռայի ձայնաւոր Գօլուխանովի
առաջարկութիւնը քաղաքի անբնակ հողերի վե-
րադնահատութեան մասին, քննվեցաւ. Գոլուխան
մէջ մայիսի 11-ի նիստում ջայնների մեծամաս-
նութեամբ ձայնաւորները մերժեցին Գօլուխանովի
առաջարկութիւնը:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ
վճարված է՝ Անդրկասպեան չընթան կնքարկել
Տուրկեստանի նահանգապետի իշխանութեանը:
Անդրկասպեան չընթան կը միացվի Տուրկեստանի
հետ անդրկասպեան երկաթուղու կառուցման
վերջացնելուց յետոյ: Մինչև այժմ, ինչպէս յայտ-
նի է, Անդրկասպեան երկիրը ենթարկվում էր
կովկասեան կառավարչապետի իշխանութեանը:

Տիգրան «Новое Обозрение» լրագիրը հաղոր-
դում են որ այս տարի Գարայազում հոնձը առ-
հասարակ միջակից բարձր չի լինի, որովհետեւ
այս տարվայ դարնան սկզբում եղած գրտերը և
քամիները կորստաբեր ներգործութիւն ունեցան
բուսականութեան վրա:

ԴԵՐԲԵՆՏԻՑ մեզ գրում են հետևեալը: «Այստեղ երկամաների մէջ տարածել է կապույտ հաղ կոշիկները, որ տեսած է մօտաւորապէս մի երկու շաբաթ: Հաղ կոշիկները է շուտ շուտ, այնպէս որ երկամաների աչքն ու երեսը սկսում է ուռել և նրանք, որոնք շատ փոքր կամ նուազ են լինում, չը կարողանալով դիմանալ տկարութեանը, զոհ են դնում: Փոքր առ փոքր սկսվել է անցնել մեծերին, բայց առանց որ և է մեռաւ տալու»:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Մայիսի 8-ի դէշերը, սրտի պայթիւնից յանկարծակի մեռաւ այստեղի հայոց դպրոցների տեսուչ՝ Կ. Մէլքեան: Յաջորդ օրը, մայիսի 9-ին կատարվեցաւ չքեղ կերպով հանգուցեալի թաղումը. դադարի վրա ճառ խօսվեցաւ Յուդարկաւորութեանը ներկայ էր մեծ բազմութիւն: Մէլքեանի մահը, որ մի մեծ կորուստ է այստեղի հայոց երկսեռ դպրոցների և հասարակութեան համար, մեծ վիշտ պատճառեց ամբողջ Գանձակին, որտեղ հանգուցեալը տարիներ ընթացքում թողել է աղիւն և օգտաւէտ գործունէութեան շատ յիշատակներ»:

Ֆինանսների նոր միւնիստը վիշնեգրադսկի շարունակում է ներկայացնել մի շարք ֆինանսական նախագծեր: Դորեւումս միւնիստը նախագծել է մի շարք միջոցների, որոնցով ուղում է մեծացնել պետական գանձարանի հասոյթները: Ի միջի այլոց ֆինանսների միւնիստը նախագծել է հետևեալը. 1) ակցիզ դնել նաւթի վրա, որովհետև նաւթային արդիւնաբերութիւնը շատ ծաղկել է Ռուսաստանում, ուստի միւնիստը նաւթի վրա տուրք դնելը արդարացի է գտնում: 2) Թէ արտասահմանի և թէ ռուսաց զինիւնների շինով վաճառելը միթարկել բանդերօլային աուրքի: Ֆինանսների միւնիստը կենսական մէջ մշակում են այդ մասին հարկաւոր նախագծեր, որոնք կը ներկայացվեն պետական խորհրդի աշխատակցին նստաշրջանի ընթերցանութեանը:

Հաւում ենք, որ երկու շաբաթից յետոյ մեր տաղանդաւոր նկարիչ պ. Բաշինջադեան ղեկավարութիւն ունի գնալ Պիտերբուրգ, այնտեղ իր պատկերների ցուցահանդէսը բանալու համար: Պ. Բաշինջադեան դարձեալ մի քանի նոր պատկերներ ունի նկարած: Այսպէսով այս օրերս նրա արուեստանոցը մենք առիթ ունեցանք տեսնել երկու նոր պատկերներ՝ մինը «Փօստի ճանապարհը Կովկասում», միւսը «Կովկասեան գերեզմանատուն»:

Այս վերջինը, մանաւանդ, հիացնում է տեսողին իր թարմ գոյներով, թափանցիկ օդով և գեղեցիկ հեռաւորութեամբ:

Շաբաթ օր, 16-ին մայիսի, վառի նախին ռուսաց հիւպատոս պ. Կ. Օլբրիտի կարգաւ Կովկասեան Աշխարհադրական ընկերութեան մէջ մի հետաքրքիր զեկուցում թիւրքաց-Հայաստանի և Պարսկաստանի ազգաբնակչութեան մէջ բողոքականութեան տարածման մասին: Զեկուցանողը իրողութիւնների մի ահագին քանակութիւն ներկայացրեց, որոնք հիմնված էին իր անձնական դիտողութիւնների վրա: Նա այն կարծիքի է, որ բողոքականութիւնը վերոյիշեալ երկրներում ոչինչ ապագայ չունի, բողոքական միաբնակները չունեն գրեթէ ոչինչ ներկայութիւն ասիական քրիստոնէայ ազգաբնակչութեան մէջ: Ամերիկական միսիոնարները իրանց բարդ ու վարքով, իրանց առանձնական դիրքով ոչինչ բարոյական կապ չունեն բնակիչներին հետ և իսկապէս չեն ձգտում բուն կրօնական յեղափոխութեանը, այլ աւելի քաղաքական նպատակներով առաջնորդվելով անգլիացի հիւպատոսների հրահանգներով, քանի որ այդ երկրներում չը կան ամերիկական հիւպատոսներ: Երբ որ այդ երկրներին մի քրիստոնէայ ընդունում է բողոքականութիւնը, նա կատարելապէս խղում է իր բոլոր բարոյական և հասարակական կապերը չրջապատող հասարակութեան և իր ընտանիքի հետ: Շատ քիչ է պատահում, ասում է զեկուցանողը, որ տեղացիք ամբողջ ընտանիքով ընդունէին բողոքականութիւնը, այլ իւրաքանչիւր ընտանիքից մի մի հոգի, որը և կատարելապէս անջատվում է համայնքից, օտար է դառնում հասարակութեանը: Միակ տեղը, որտեղ բողոքականութիւնը ճշմարիտ աջողութիւն է ունեցել և բազմաթիւ հետեւողներ ունի, ամբողջ մէջ խոր արմատներ դրած լինելով—դա Ուրմիայի գաւառն է: Իսկ առհասարակ բողոքականութիւնը գրեթէ ոչինչ աջողութիւն չունի ոչ Հայաստանում, ոչ էլ Պարսկաստանում. և բողոքական միաբնակներին ցոյց տը-

ւած հաշիւները և միաբնակական ընկերութեանը ներկայացվող զեկուցումները դիտումը չափազանցած են, կենսորոնական ընկերութեան աչքերը չլացնելու համար: Վերջապէս բողոքականութիւն ընդունած ասիական ամենին աւելի լուսաւորված ու կրթված, աւելի քաղաքակիրթ մարդ է դառնում, ասում է զեկուցանողը, քան թէ իրան չըբապատող չըլանը: Ընդհակառակն զեկուցանողը աւելի միջոց է ունեցել բուն լուսաւորված և քաղաքակիրթ անհատներ և ամբողջ ընտանիքներ հանդիպելու: Լուսաւորչական հայերի մէջ, քան թէ բողոքականների մէջ: Զեկուցանողը աւելցրեց որ հայոց լուսաւորչական համայնքը աւելի էլ աջող կերպով կը մրցէ բողոքական և կաթոլիկ միաբնակների պրօպագանդայի հետ, եթէ իրան լուսաւորչական համայնքի մէջ չը տիրապետէին անընդհատ երկպառակութիւններ, որոնց չնորոյժ շատ անգամ, ինչպէս օրինակ Պօղոս եպիսկոպոսի անտակալութիւնների չնորոյժ, նրա ու հայոց համայնքի մէջ ծագած երկպառակութիւնների չնորոյժ հայերը աւելի են անջատվում իրանց եկեղեցուց և մանում օտար եկեղեցիների հովանաւորութեան տակ:

Պաշտօնական «Кавказ» լրագրում տպւած է հետևեալը: «Թիֆլիսի քաղաքային ղեկավարական ատեսնի նախագահի կարգադրութեամբ, յայտարարվում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ յիշեալ ատեսնը ներկայ մայիսի 12-ից սկսել է իր գործունէութիւնը: Ի նկատի ունենալով այն, որ ղեկավարական կանոնադրութիւնը քաղաքային ատեսնների վրա պարտաւորութիւն է դնում՝ ստուգել Թիֆլիսի քաղաքային վարչութեան կազմած ղեկավարչական ցուցակները, և հարկաւոր դեպքում լրացնել դրաց, նորոգել և որոշել ղեկավարական ծառայութեան կանչվողի իրաւունքները, այլ և այն թէ, կանչվողներից որ և ինչ կարգով է նշանակվելու ծառայութեան մէջ,—ուստի. 1) այն անձինք, որոնք կամենում են յետաձգում ստանալ ուսուցիչ աւարտելու համար, պէտք է յայտարարեն այդ մասին Թիֆլիսի քաղաքային ղեկավարական ատեսնին ոչ ուշ, քան ներկայ տարւոյ օգոստոսի 15-ը, ներկայացնելով վկայական ուսումը շարունակելու մասին այն ուսումնարանական հիմնարկութեան վարչութիւնից, որի մէջ յայտարարողը ուսանում է, բացատրելով թէ արդե՞ր, ղեկավարական ծառայութիւնը վիճակով է ուղում կատարել, թէ իբրև ազատ կամաւոր (вольнoопрeдѣляющіeся): 2) Նրանք, որոնք իրաւունք ունեն ազատ մնալու ղեկավարական ծառայութիւնից ընդհանրապէս, կամ միայն խաղաղութեան ժամանակը ծառայութիւնից, այլ և նըրանք, որոնք իրաւունք ունեն իսկական ծառայութեան մէջ պակասեցրած ժամանակով մնալու, ներկայացնում են քաղաքային ղեկավարական ատեսնին,—առաջվիճակները հարկաւոր վկայականներ իրանց կոչման կամ պարագմունքի մասին, որը իրաւունք է տալիս ազատ մնալու ղեկավարական ծառայութիւնից, կամ խաղաղութեան ժամանակ ծառայութիւնից, իսկ երկրորդները՝ կամ պետական պաշտօնավարութեան աստիճանի զիջում կամ ատեստում, կամ ուսումնարանական վարչութեան կողմից վկայական ուսումը աւարտած լինելու կամ համապատասխան ճիւղութիւն ընդունած լինելու մասին, և 3) այն անձինք, որոնք ղեկավարական ցուցակներին մէջ նկատած սըլխաների և պակասորդների մասին իր ժամանակին չեն յայտարարել քաղաքային վարչութեանը, և այդպիսով ժամանակը անց են կացրել, կարող են այդ մասին յայտարարել քաղաքային ղեկավարական ատեսնին կողմից, եթէ միայն կը ներկայացրեն ասպացոյցներ, թէ ժամանակը անցկացնելու պատճառը առանձին ուղադրութեան կատարելապէս արժանի հանգամանքներն են եղել: Թիֆլիսի քաղաքային ղեկավարական ատեսնը ղեկավարված է Նրեանիան հրապարակի վրա գտնվող քաղաքային տան մէջ: Ատեսնը նիստ է ունենում երեքշաբթի և շաբաթ օրերը և յայտարարութիւններ ընդունում են այդ մի և նոյն օրերը, առաւօտան 9 ժամից մինչև 11 ժամը:

Մայիսի 17-ին, Թիֆլիսի Մուշտաիդ այգիում Վալայ մէջ գրադարութիւն տարածող ընկերութեան օգտին կայացած ժողովրդական զբօսանքը բաւական աջող անցաւ: Կաւ եղանակի չը նորոյժ հաւաքված էր մեծ բազմութիւն: Վիճակախաղի տոմարները ամբողջապէս ծախվեցան: Զբօսանքը տեղի ժամը 4-ից մինչև զինչիւրայ ժամը 10-ը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՐՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Գերմանական մի քանի լրագրների հաղորդած տեղեկութիւններից երևում է, որ շուտով բէյսուտային պէտք է ներկայացվի կառավարութեան կողմից մի նախագիծ, որը վերաբերում է լրտեսութեան Ուրեմի կարելի է սպասել, թէ Գերմանիայի ժողովրդական ներկայացուցիչները շուտով կը սկսեն խորհել լրտեսների և լրտեսութեան խնդիրներ վրա, որոնք այժմ, Բիսմարկի և Մօլտկէի կարծիքով, անհրաժեշտ ֆակտորներ են համարվում զորացնելու կառավարութեան աղքատացութիւնը և ճնշելու այնպիսի շարժումները, որպիսիք երևում են Էլզաս-Լօթարինպիայում, Պօլանդում, և սօցիալիստական շրջաններում: Գերմանական կառավարութիւնը վաղուց արդէն մի մեծ դէպք է դարձրել իր համար լրտեսների ահապարհները, որոնց պահելու համար ծախսվում է տարեկան 6 1/2 միլիոն մարկ: Լրտեսութեան վարչութեան գլխին կանգնել են շատ բարձրաստիճան համարվող անձինք: Գերմանական լրտեսութիւնը այժմ ներկայացնում է մի մեծ կազմակերպութիւն, որը անհրաժեշտ է համարվել երկրի կառավարութեան համար: Գերմանական լրտեսները երեք կարգի են բաժանվում. 1) կենտրոնական լրտեսութիւն, որի անդամները գտնվում են Բերլինի բարձր ոստիկանութեան, կամ գլխաւոր դեմոնական լրտեսութեան անդամները գտնվում են նոյնպէս և արտաքին գործերի միւնիստրութեան ղեկավարութեան ներքոյ: Այդ լրտեսութեան գործակալները հարկաւոր ժամանակները եւրօպական պետութիւններին այս մայրաքաղաքից այն մայրաքաղաք են անցնում, դրանք մեծ թիւով գտնվում են Փարիզի մէջ, և ծածկված աստիճանաւորի, դերասանի, ուսումնականի, և սալօնական կնոջ դիմակի տակ մանում են Փարիզի բոլոր շրջանները, խմբագրութիւնները և քաղաքական գործողների կարենները: Այդ գործակալների կարգադրութեան ներքոյ գրված են մեծ գումարներ, որոնցով նրանք իրանց ձեռքն են դրում պետական անձանց սերտիւններին և մօտիկ մարդոց, և ապա դրանց միջոցով խմանում են իրանց հարկաւոր դադանքները: Այդ գործակալները ունեն նամակագրութեան համար իրանց յայտնի և գաղտնի նշաններ: Բայց այդ կենտրոնական լրտեսութիւնից Գերմանիան ունի և 2) երկրորդական լրտեսներ խումբ, որի անդամները ցրված են Գերմանիայի և ուրիշ երկրների ամեն տեսակ շրջաններում: Գրանց մէջ կայ մի առանձին խումբ, որը կոչվում է թուղ լրտեսների խումբ: Օտար երկրներում այդ լրտեսների ղեկավարները գերմանական հիւպատոսարաններ են, ինչպէս որ կենտրոնական լրտեսութեան ղեկավարները գերմանական դեսպանատներն են: Լրտեսութեան գործերի մէջ, իւրաքանչիւր հիւպատոս կախված է արտաքին գործերի միւնիստրութեան մի առանձին բաժնից: Գրա համար հաստատված են յարաբերութիւնների համար գաղտնի նշաններ և մայր գումար: Գերմանական կառավարութիւնը լրտեսների համար եւրօպական երկրները բաժանել է բաժնիների, այսպէս, օրինակ, Ֆրանսիան բաղկացած է 12 բաժնից: Գերմանական լրտեսների գործունէութեան համար Բացի այդ բոլորից գերմանական դեսպանները ունեն իրանց ձեռքի տակ մի առանձին խումբ լրտեսների, որոնք կաղմում են գերմանական լրտեսութեան երրորդ կարգը, դրանց միջոցով գերմանական դեսպանատները ձեռք են բերում դանադան գաղտնի նկարներ, յատակագծեր և տեղեկութիւններ: Այդ լրտեսները իրանք գերմանացի են, բայց իրանց ձեռքում ունեն ֆրանսիական, անգլիական, բելգիական և ուրիշ անցադրեր: Բացի դրանից գերմանական լրտեսներն այնպիսի մարդոց, որոնք պատրաստ են փողի և չքանչանի համար ծախել իրանց պատիւը, համարում են հայրենիքը: Գրանց մէջ կանաչք մեծ տեղ են բռնում Այդ ահագին կազմակերպութիւնը իր ոյժով, իր ուղղութեամբ, և իր գործունէութեամբ այսօր, տառն և իններորդ դարում, մի մեծ դէպք է դարձել, որով գերմանական կառավարութեան ղեկավարները յոյս ունեն ճնշել ամեն մի շարժում, ամեն մի ցոյց, և ամեն մի նոր գաղափար գերմանական քաղաքականութեան հակառակող շրջաններում և երկրներում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բէլգիայում ևս համարեա թէ տիրապետում է միւնիստական ճգնաժամ: Միւնիստութեան հաւանագծերը թէ պէտք է ամրացնել Բէլգիան, որի համար ծախսվում են ահագին գումարներ, ընդդիմադրական կուսակցութեան կողմից:

—Եւրօպական պետութիւններից համարեա ոչ մէկը չէ պատասխանել Բ. Գրան ստաջարութիւնների բոլորական իշխանի ընտրութեան վերաբերութեամբ:

—Փարիզի միւնիստը համարեա միակամ ուղում է որ Բուլանթէ մնայ պատերազմական միւնիստը:

—Փարիզից հեռացրում են, որ Ֆրէյսինէ առաջին անգամ հրաժարվեց կազմակերպելու միւնիստութիւն այն պատճառով, որ ոչինչ հիմք չէ գտնում, որով կարելի լինէր նոր կարիքներին ապահովել հաստատ ապագայ:

—«Intransigeant» լրագրի մէջ առաջարկվում է, որ Ֆրանսիայի բոլոր կողմերում պետիցիաներ կազմվեն՝ Բուլանթէին պատերազմական միւնիստի պաշտօնի մէջ պահելու համար: Շատ քաղաքներում արդէն տպվում են այդպիսի խնդրագրեր: Ֆրանսիական շատ քաղաքների լինեալարական խորհուրդները վճռել են դիմել նախագահ Գրէվին, և խնդրել, որ Բուլանթէ մնայ իր պաշտօնում: Բոջֆօր յայտարարեց արդէն իր օրգանում, որ եթէ Բուլանթէ հեռացվի պաշտօնից, Փարիզի մէջ առաջ կը դան մեծ յուզմունքներ:

—Բէլգիայի բանտերների վերջին շարժումների պատճառներից մէկն էլ այն է, որ միւնիստութիւնը ուղում է հարկ դնել միս վրա: Աղքատ դասակարգը ընդհանրապէս բողոքում է այդ հարկի դէմ:

—Վիեննայից գրում են, որ վերջին ժամանակները Բ. Գուռը դադանի յարաբերութիւններ է սկսել բողոքական խնամակալների հետ, իշխանի ընտրութեան հարցի առիթով: Լուրեր են տարածվել, որ եւրօպական պետութիւնները հրաժարվում են խառնվել բողոքական իշխանի ընտրութեան գործի մէջ, և դա գլուխ բերելը ուղում են թողնել Թիւրքիայի ղեկավարութեանը:

—Աթենքից գրում են, որ Լրիտէ կղզու վրա խաղաղութիւնը վերականգնելու համար Բ. Գուռը, Պօլսի յուշաց դեսպանի միջոցով խնդրեց յոյս կառավարութեան աջակցութիւնը: Առհասարակ յուշաց կառավարութեան աղքատութիւնը օրից օր աճում է այդ կղզու աղքատակութեան վրա, և հաւանական է, որ մօտիկ ապագայում Լրիտէ կը միանայ Զոնաստանի հետ:

—Գերմանական կիսապաշտօնական լրագրիները սպառնում են Ֆրանսիական կառավարութեանը, ամրապիկելով, որ եթէ Ֆրանսիան կը շարունակի սպառազինել իր զորացնելը, Գերմանիան կը սպառազինի իր ամբողջ զօրքը:

—Վիեննայից գրում են, որ եւրօպական կառավարութիւնների մօտ գտնվող բողոքական ներկայացուցիչները միանգամից հարց են յարուցել՝ որոշել և նշանակել բողոքական դահի վրա մէկ իշխան:

—Նապոլեան իր սահմանները եռանդով ամրացնում է: Այդ նպատակի համար Նապոլեանի կայսրը իր անձնական միջոցներից նուրից աւելի քան մի միլիոն ֆրանկ: Նապոլեան հարուստ շրջաններում այդ նպատակով մեծ գումարներ են հանդանակվում:

—Բէլգիայում բանտերների շարժումները այնքան ընդարձակվում են, որ կառավարութիւնը երկուշ է կրում, թէ կարող են անցնալ տարւոյ դէպքեր կրկնվել: Այդ պատճառով կառավարութիւնը պատրաստ ունի մեծ քանակութիւն զօրքերի և ժանդարմների: Նահանգապետները հրատառակեցին պրոկլամացիաներ, որոնցով հրաւիրում են բանտերներին շարունակել աշխատանքները:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է, Պարսկաստանից եկած մըշակներին և փահլաններին ա ն գ ա դ ե ր տ ալիս են մեծ մասամբ ն ա յ ի ր կ ո չ լ ա ծ անձինքը, ի դիմաց պարսից հիւպատոսարանի: Երկրները այդ անցադրերը տալիս են ոչ թէ նրան, ում հարկաւոր է, և ոչ թէ օրինական յայտնի ձեռք այլ ում և ինչպէս պատահի: Անցադրերը կրում են պարսից հիւպատոսարանի ստորագրութիւնը և կրկնը: Նայելները իրանք զրեւ չեն իմանում, և այդ պատճառով անցադրեր ստացողի նշանները գրելու համար, նրա գիմում են մէկ ուսերին:

իմացողի: Այդպիսիններն էլ շատ անգամ սկսում են հանաք անել իրանց դիմող նախնիների հետ, որոնք առեւել չհղում են իրանց ստանալի փողի մասին, քան թէ կանոնաւոր անցադրի տարու մասին: Եւ որովհետեւ այդ անկանոնութիւնները կապուած են ծառայել հետեւեալ: Մի այդպիսի անցադրի մէջ լաւանքին նշանները (особые примѣты) դիմաց գրված են:

Ալանները—կրօնի.
Պոչը—կարծ.
Մէջքը—վրա—վերքեր....

Այդպիսով նորերումս դատաստանական քննութեան ենթարկուեցաւ հետեւեալ դրոշմը. մի կին 1879 թվին ամուսնացաւ Ռիչեյ անունով մի մարդու հետ. իսկ 1883 թվին, երբ զեռ առաջին մարդը կենդանի էր, այդ կինը երկրորդ անգամ ամուսնացաւ Ալանին մարդը շատ վատ էր վարվում կնոյ հետ, և դատաստանութեամբ էր մինչև անգամ բանտարկութեան կնոյն ծննդու պատճառով: Բանտից ազատվելուց յետոյ մարդը մի քանի տարի բոլորովին անպայտացաւ: Բանից երեւցաւ, որ երկրորդ մարդը առաջինից ոչնչով չէր զանազանվում, և կինը ստիպուեցաւ դիմող դատարանի պաշտպանութեանը: Երկու ամուսինները իրանց վրէժը առնելու համար միասնաբար զանազան փորձեր արեցին իրանց կնոյ վրա: Դատարանը միտադրելով կնոյն երկու ամուսինները ունենալու մէջ դատապարտեց նրան հինգ րոպէս և ու պէի բանտարկութեան: Ներկայ եղող հասարակութիւնը այդ վիճիւր ընդունեց բռնու ծախհարութիւններով:

Պետերբուրգի «Новое Время» լրագիրը իր «Փորձերի խորհրդի» բաժնի մէջ տպել է հետեւեալը. «Պետերբուրգի համալսարանի պրոֆէսորները մէկ պատգամով են մի նախադիմ, որով ցանկութեան կայ մեծ ցնեղ հաստատել համալսարան մտնել ցանկացողներին համար: Այդ նախադիմ հետեւեալը կարծում է, որ համալսարանի մէջ պէտք է ընդունել նրանց, որոնք անհրաժեշտներին կամ առաջին գիշերային փաճառականներին որովհետեւ, վերջերս մի և նոյն ժամանակ 400 բուրձի տարեկան մի տուր են որ այդ նախադիմը այժմ քննարկում է:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍԱՅԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՅՈՒՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիս: Այսօր, Նոյս կայսերական Մեծութեան Սրբազան Թագադրութեան մեծահանդէս օրը, մայրաքաղաքը չքեղ կերպով դարձաւ իր զրոյգութեամբ: Եւ իրաւունքով տաճարում, բարձրագոյն պալատի բարձր ատոմեանաւորների ներկայութեամբ, կատարուեցաւ. ա. պատարագ և ապա մաղթանք: Ընդունելութեան բարձրագոյն պալատում չէ կար—Պետական խորհրդին ներկայացրվեցաւ մի նախադիմ, որով առաջարկվում է թողարկել պետական բանկին և նրա բաժանմունքներին փոխառութեան անել այն անուանի չորհուրդներ—Գնեւրալ Ֆէոդոր Գանիլովիչ Գեյլէլ մուտաւ—«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Պետական խորհուրդը օգտատէտ է համարել բարձրագոյն անուանի մեծահանդէսը, որը ներմուծվում է Բալտիան ծովի կողմից և արեւմտեան ցամաքային սահմաններից, իւրաքանչիւր պուլին 1/2 կուպէլով. իսկ կոկի իւրաքանչիւր պուլին վրա գնել հարկ: Չերեմուխեան նաւահանգիստներում ներմուծվող կոկիսի համար 4 1/2 կուպէլ. արեւմտեան ցամաքային սահմաններում ներմուծվող կոկիսի վրա 3 կուպէլ, և Բալտիան ծովի կողմից բերվող կոկիսի վրա 1 1/2 կուպէլ պուլին: Այս մարտահարկը ենթադրվում է պահպանել մինչև 1898 թվ. յունվարի 1-ը:

ՓԱՐԻԶ, 15 մայիս: Ֆրէյսինէ նորից հրատարակեց նոր միջնադարեան կազմելուց: Սենատը հաստատեց շաբաթի 10 ֆրանկի լրացուցիչ միջոցաւորվել: Այսօրված «Օպերա-կոմիկ» թատրոնի աւերակները փորկիւս արդէն զանգված են 56 դիակներ, մեծ մասամբ երիտասարդ կանայք, չքեղ հագուստներով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիս: Հրատարակված է պետական խորհրդի կարգադրութիւնը, բարբին է հրէական կրօնի հակողը և բացատրողը: Այդ պաշտօնի համար հրէաները ընտրում են իրանց հաւատակցներին: Հրապարակական ընտրողութեամբ: Ընտրողութիւնները կատարվում են երեք տարին մի անգամ, ընտրվում են նախկին բարբինների զրգորողները, հրէական ուսուցչական ինստիտուտներից, ընդհանուր բարձրագոյն կամ միջնակարգ դպրոցներից աւարտածներից և կամ օրինակաւ հանջ վկայականներ ստացողներից: Ընտրվածների անունները ներկայացվում են նախագահին իշխանութեան հաստատութեանը, և հաստատվելուց յետոյ ընտրվածը ենթարկվում է երգման Բարբին կոչման վկայական տալիս է այն նահանգական

իշխանութիւնը, որը հաստատել է բարբին իր կոչման մէջ:

ԲԻՐԻՍԵԼ, 15 մայիս: Բանտարկւմ շարժումները դեկտրոն մասնաժողովը, երէկ դիմեց ամբողջ միջնադարեանը մի գրութեամբ, որով պահանջում է, որ միջնադարեանը պաշտօնական ձեւով խոստում տայ ժողովը արձակելու, ընդհանուր ձայնատուութիւն մտցնելու, և հիմնադրել ժողով կազմելու մասին: Մասնաժողովը յայտարարում է, որ եթէ այդ բոլորը կը խոստանան, այն ժամանակ Բիւրիսելում անմիջապէս խախտութիւնը կը վերականգնվի. հակառակ դէպքում բանտները կը սկսեն բացարձակ ներքին պատերազմ: Մասնաժողովը պատասխան է պահանջում յայտնի ժամանակամիջոցի ընթացքում: Գաղտնաբանական իշխանութիւնը կարգադրեց արգելել ամբողջ Բիւրիսելում գնել փաճառներ: Դրա հետ միասին հրամայված է ձերբակալել մի քանի անարկիստներ, որոնք մեղադրվում են դատադրութեան կազմելու մէջ, մտադրվելով այդ դատադրութիւնը կարծ ժամանակամիջոցի ընթացքում դործադրել: Ձերբակալված են շատ թղթեր: Մայիսի 14/26-ի հրամանով, միջնադարի մի մասը զրոյակի տակ է կանչվում: Բանտների գործադրութիւնը սկսում են մի փոքր թուլանալ:

ՎԻԵՆԱ, 16 մայիս: Այսօր սպասվում է Չերեմուխեյի Նիկողայոս իշխանը, իր ընտանիքով:

ԲԻՐԻՍԵԼ, 16 մայիս: Բանտների շարժման մէջ զործում են ֆրանսիացի զրդիներ:

ԼՕՆԻՕՆ, 16 մայիս: Գաղղոսից ոչ հեռու պայթիւն առաջ եկաւ քարածուխի հանքերում. աւելի քան 200 բանտներ տուրակներ տակ մնացին:

ՊԵՐՍՊՈՒՐԳ (Ունգարիա), 16 մայիս: Երկու օր շարունակվում էին այսօր հակահրէական անկարգութիւնները, որոնց վերջ դրվեցաւ պոլցիսի մի յիշատակութեամբ:

ՓԱՐԻԶ, 16 մայիս: Վաղը հրատարակված կը լինի նոր միջնադարեան անդամների ցուցակը, իսկ իր գլխավորութեամբ: Բուլանթէի Պետերբուրգի ֆրանսիական դեսպան նշանակվելու լուրը հիւրընկալ է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մայիս: Երէկ Պետերբուրգի եկաւ Բերլինի ուսուցչական կոմիտէի Գեյլէլ, 17 մայիս: Չերեմուխեյի իշխանի այսօրվա գալու նպատակն է խորհրդակցել բժիշկների հետ:

Վ. ՊՈԼԻՍ, 17 մայիս: Սուլիմանի. դէմ եղած դատադրութեան բացման առիթով, մի քանի բարձր պաշտականներ ուղարկվեցան Մէկկաւ: Կրիտէ կողմի ուղարկվեցաւ նոր զօրք:

ՊԵՏԱՍԻԱՆՆԵՐ

ՂՈՒԲԱ, Մ. Ա. «Առողջապահական թերթը» այլ են չէ հրատարակվում, այդ ամսագիրը երեք տարի է արդէն դադարել է, և նրա խմբագիրը մի. Տիգրանեան այժմ գտնվում է արտասահմանում:

ԱՐԻՆՍԿԱՅԱ, Մ. Ա. Լրագիրը կուղարկէր ձեռն մայիսից, բայց դրա 8 ամսով գրվելով պէտք է վճարել 8 բուրձի Ուրեմի մինչ քանից դարձեալ ստանալու ենք 2 բուրձի:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ Ա Շ Ի Ի

ՀՈՐԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀԻՎԱՆՆԵՐ ՀԱՆՐԱՊԵՏԱՐԱՆԻ Ի 11-ԷՆ ԱՊՐԻԼԻ 1883 Թ. ԳՅՁՆ ՄԱՐՏԻ 1887 Թ.

Բոլոր քրիստոնէայ ազգերը իւրաքանչիւր տարի որոշեալ օրերում կատարում են հոգեհանգիստներ իրանց հանգուցեալների վրա: Արտաքին տրաւ, կից լուսաւորութեան, աճում է հոգատարութիւն անհանգիստ հանգուցեալների յիշատակը՝ դնելով նոյա գերեզմանների վրա արժանի մահաւ ձաններ և առհասարակ բարեկարգել այնպէս, ինչպէս որ համարեալ բոլոր եւրոպական քաղաքներում տեսնում ենք, այնտեղ հանգուցեալները ներկայացնում են մի գեղեցիկ բուսականութեան պարկ, ծառայելով ժողովրդեան որպէս տեղի զբոսանոց և հանգուցեալներ:

Շատ զգալի է, որ այդ տեսակետից, ինչպէս և ուրիշ բազմաթիւ բանից, մեր Թիֆլիսը շատ լաւ է մնացել. քաղաքային հանգուցեալները մնացել են արտաքին օր և ոչ զարգացած. նոյն

զրուցեան մէջ գտնվում էր և Հաւաքարի «Խոջիվանք» հանգուցեալները, ու դարձել էր թղթախաղութեան և զանազան գեղարվեստի տեղ, տեղական կրթութեան:

Մի քանի բարեմիտ հայ անձանց տոկուն աշխատութեամբ և քաջակրթութեամբ նախաձեռնելով հոգիատարության Մարմինը վարդապետի, այժմ եւ պիտիպարի, 1883 թվականին, Թիֆլիսի առաջին հոգեպարտեզում կայացաւ ժողով, Հաւաքարի Խոջիվանք հանգուցեալների բարեկարգութեան համար, որ և կարժանեալիցաւ ընտրութեամբ հոգաբարձուաց, հետեւեալ անձնաւորութիւնները: Մեծապ. պ. Գարուիլին Գովհանէսեան Շախաբեանց, վաճառական Գալուիլ Մեկրեանց. նոյն հոգաբարձական կազմակերպութեան մէջ արժանացաւ ընտրութեան լինելու և եւ, ներքոյ ստորագրեալս (Թեպէտ այն ժամանակ եւ բացակայ էի քաղաքից). ապա հոգաբարձական առաջին նիստում, հաւանութեամբ միւս հոգաբարձուաց վիճակեցաւ ինձ ընդունել հանգուցեալների ներքին կառավարութիւնը:

Թեպէտ Հաւաքարի «Խոջիվանք» հանգուցեալների զործը չորս տարվայ ընթացքում չէ կարելի ասել, որ շատ արագ քայլերով է առաջ գնացել, բայց և այնպէս այս կարճատեւ նկարագրով կանցաւ ծանոթացնել հայ հասարակութեանը այն, ինչ որ մինչև այսօր իրագործվել է և թէ ինչ պաշտպան ցանկալի է իրագործել:

Հ Ա Շ Ի Ի

Ընդունելով Հաւաքարի «Խոջիվանք» հանգուցեալներ անհանգիստները զրուցեան մէջ, հարկաւոր համարեցի մտցնել կանոնաւոր կառավարութիւն, ուստի հիմնեցի գրասենեակ, կարգելով ա) մի կառավարիչ՝ սկզբում ամիսը 25 բուրձի, ապա 30 բուրձի ռոճիկով, որի պարտականութիւնն է ամբողջ օրը գտնվել հանգուցեալներում, կառավարել պահպաններին, պահել գրքերը, ունենալ վերահայեցողութեան բարեկարգութեան և կատարել ժողովրդի պահանջը, իսկ կարեւոր դեպքում ներսում, արտաքին տրաւ իրաւանց, ծանուցանել հոգաբարձուին. բ) երեք մշտական պահպաններ, որոնք և գերեզման փորողներն են ու ընկալում են հանգուցեալներին, նշանակելով իւրաքանչիւրին ամսական 15 բուրձի, որոնց պարտականութիւնն է պատրաստել գերեզմանը և ազատ ժամերին կատարել հանգուցեալների այլ և այլ զործեր:

Մտցվեցան երկու անդորրապարկային տպագրած ժապակեմալ ատոմաներ, միւր գերեզմանի պատրաստութեան, միւրը նուիրատուութեան համար, մի յիշատակարան շաբաթական ելեմից համար և մի մայր մատեն, որով մէջ քաղվում են հետեւեալ տեղեկութիւնները. ա) աղքատներ հանգուցեալ, ծխատել քահանայից և վճարողաց. բ) հասակը և համար անդորրագրի որ է և գերեզմանի. գ) մուգը օրական. դ) նուիրատուութեանը վրան բարեկարգութեան և ե) ելք օրական: Իսկ միւս նուիրատուութեանց անդորրապարկային յանուն բարեկարգութեան մատենի մէջ գրվում են անդորրագրից համարները, նուիրողաց ազգանունները և նուէրները:

ՄՈՒՏԵՐ

Ի 11-էն ապրիլի 1883 թ. ԳՅՁՆ մարտի 1887 թ. թաղաւանների թիւը է 3431 հոգի և գերեզման պատրաստելու վարձ ստացվել է հինգ հարկ չորս հարկեր երկու բուրձի եօթնասուն կ. (5402 ր. 70 կոպ.) միջին թիւով իւրաքանչիւր գերեզմանի վարձ եղած է մօտաւորապէս 1 բուրձ. 571 1/2 կոպ., որոնց մէջ հաշուած են և ձրի թաղաւանները: Նուիրատուութեանց համարների թիւն է 341, որից ստացուել է մի հաղար եօթն հարկեր քառասուն և մէկ բուրձի վաթսուն կոպ. (1741 ր. 60 կ.): Մասնաւոր նուէրներ սեղանատանը ձաչելու առթիւ եղած են ութսուն և մէկ բուրձի երեսուն կոպ. (81 ր. 30 կ.): Զատիկ երկուշաբթի օրերը երկու անգամ ժողովարարութիւնից զոյացել է 234 ր. 10 կոպ.: Այսպէս ուրեմն բոլոր մուտքն է եօթն հաղար չորս հարկեր յիսուն և երկու բուրձի յիսուն կոպ. (7452 ր. 50 կ.):

Ի 11-էն ապրիլի 1883 թ. ԳՅՁՆ ապրիլի 1887 թ.

Ե Լ Ք

Գնված են. ներկ և վրձին համարների համար 19 ր. 10 կ. թանաք և թուղթ 7 ր. 35 կ. մի վառարան 3 ր. 70 կ. կաւամաններ 1 ր. պարան՝ գերեզմանի և ծառեր կապելու համար 16 ր. թաղթի նորոգութեան, մահալակ և դուլ 2 ր. 20 կ. գրասենեակի աթոռներ 15 ր. լամպ 8 ր. 30 կ. ապակիներ 2 ր. 40 կ. դրան փակարան 1 ր.

95 կ. ջրեր 4 ր. սայլի վարձ 1 ր. 60 կ. սղոցներ և տապար 5 ր. 30 կ. բանալի 60 կ. տաշկաներ 15 ր. տաշկայի անիւներ 3 ր. 70 կ. գամ և կոճակներ 11 ր. 10 կ. բանաւոր մշակներին վարձ 19 ր. 20 կ. ջրեր փորողի 3 ր. քարտաշին 15 ր. 42 կ. երկաթեայ բահեր, թիակներ և քլունգներ 75 ր. փայտեայ թիակներ 28 ր. 80 կ. քլունգներ և բահեր կոթեր 15 ր. 50 կ. կոթերը չինող վարպետին 4 ր. 70 կ. քլունգներ սրելու և փորագրելու 45 ր. 7 կ. Մարտիրոսեանցի տպարանին վրան տպագրութեան անդորրադրական մատենների, թղթի և կազմի համար 17 ր. 50 կ. վարդանանցի տպարանին մայր մատենի և անդորրադրական մատենների տպագրելու համար 18 ր. 40 կ. Սարգսեանցին 8 դետալ արձեւանդեան թղթի մայր մատենի և առանձին թղթի անդորրադրական մատենների համար 17 ր. 28 կ. կաղմարար Թակոբեանցին կազմերի համար 13 ր. 50 կ. ջրեր թաշատրին ջրի համար 1883 և 1884 թ. 61 ր. ոտատեղիք մաքրելու 50 ր. սեղանատան շուրջը վանդակ շինելու 31 ր. 50 կ. նոր ոտատեղի շինելու 20 ր. երկաթեայ մեծ դուռն համար երկաթ և երկաթագործ Թայրեանցին նոյն դրան շինելու 175 ր. հին պատերը 38 իւ. սաժ. նորից շինելու, քարի մշակների և որմնադիր Սարգսին վարձ 230 ր. հին պատերի կարկաստանց, մշակների և որմնադիր Սարգսին վարձ 38 ր. 30 կ. փողբաստիկ Գասպարին 1368 սաժ. ճանապարհները շինելու 375 ր. 50 կ. Թէքո Գօրէսեան 1010 հատ տընկած ծառերի համար 328 ր. և 760 հատ ծառերի նեցուկներին 38 ր. 25 կ. սայլապաններին, ծառերի համար բերած աղբի 85 ր. ջրեր Գրիգորին համաձայն պայմանի վրան 1885 թվ. ամբողջ ամառը իւրաքանչիւր ծառի օրվայ մէջ մի վեղորո ածած ջրի 210 ր., ջրեր Սահարին նոյն պայմանով վրան 1886 թ. ամբողջ ամառը ծառերը ջրելու 120 ր. Զաքար Խամ Եղիշին 137 խոր. սաժ. ճանապարհների համար բերած խէճի, իւր մշակավարձով, փոխով 966 ր. մշակ Գասպարին երկաթուղու 80 իւ. սաժ. հողերը նոր պարսպից հեռացնելու վարձ 260 ր. նուէրք Ալթունեանցին, Մաքսանցեանցին (կառավարիչներ) և մշակին 24 ր. Պօլոս Պօլոսեանցին, չքաւորութեան պատճառով վերադարձվեցաւ. գերեզմանի համար տուած 1 ր. 50 կ. մշակ Գասպարին պարիսպների շուրջ ներս և դուրս արկեր շինելու 126 ր. մշակ Տօնէին նոր ճանապարհներ բանալու արևմտեան պարսպի կողմը 20 ր. Զաքար Խամ Եղիշին ճանապարհների համար ի հաշիւ 67 իւ. սաժ. բերած աւաղի 245 ր. Լօմիճէ Գովհանէի ի հաշիւ 270 նոր ծառերի իրանց նեցուկներով 20 ր.:

Այսպէս, չորս տարվայ ընթացքում գերեզմանատան բարեկարգութեան վրա եղած բոլոր ծախսն է երեք հաղար ութ հարկեր տաւն և վեց բուրձի եօթնասուն երկու կոպ. (3816 ր. 72 կոպ.): Բացի սրան, 1883 թվին տուած է ռոճիկ կառավարչին և երեք պահպաններին 630 ր. 1884 թ. տուած է 840 ր. 1885 թ. 895 ր. 1886 թ. տուած է 900 ր. 1887 թ. վրան յունվար և փետրվար ամիսների տուած է ռոճիկ 150 ր.: Զորս տարվայ ընթացքում բոլոր տուած ռոճիկն է երեք հաղար չորս հարկեր տաւն և հինգ բուրձի 3415 ր.: Ընդամենը ծախս եղած է գերեզմանատան բարեկարգութեան և ռոճիկների համար, եօթն հաղար երկու հարկեր երեսուն և մէկ ր. եօթնասուն երկու կոպ. 7231 ր. 72 կ.: Այսպէս ուրեմն 7452 ր. 50 կ. մուտքից հանելով 7231 ր. 72 կ. ելքը, առձեռն դրած մընում է ԳՅՁՆ մարտի 1887 թ. 220 ր. 78 կ.: Օգտվելով մտքած կանոնաւոր գրքապահութիւնից, աւելորդ չեմ համարում ներկայացնել ստատիստիկական համեմատութեանց համար հանգուցեալների հետեւեալ քաղաքները:

1 օրականից մինչև 10 տարեկան հասակը թաղված են 967 հոգի արական, 909 հոգի իգական, 10 մինչև 30 հաս. թաղված են 291 ար. 176 իգ. 30 > 50 > > 300 > 166 > 50 > 70 > > 230 > 146 > 70 > 90 > > 99 > 116 > 90 > 100 > > 4 > 7 > 100 > 107 > > 3 > 17 >

Ուրեմն արական սեռի թաղաւանների թիւը սկսեալ մի օրականից մինչև հարկեր եօթն տարեկան հասակը է 1894 հոգի, իսկ իգական սեռի է 1537 հոգի, որի մէջն և է մի հոգի 120 տարեկան: Եւ այն օր. ա) հանգուցեալների մեծ օգուց կազմում են փողբաստիկները, որոնցից մօտաւորապէս 400 հոգի մեռել են ծաղկից. բ) թէ

մեծերը և թէ փոքրերը մեծ մասը Հաւաքարից են:

Այսպէս ուրեմն երեխայք մեռած են 1876 հոգի, իսկ տաս տարեկանից մինչև 120 տարեկանը 1,555 հոգի: Ընդամենը չորս տարեկան ընթացքում թաղվածները թիւն է երեք հազար չորս հարիւր երեսուն և մի հոգի (3,431 հոգի):

Ասած է. «Եթէ կամենում էք հասկացողութիւն տառնալ որ և է ազգի վրա, մտէք նրա գերեզմանատունը»:

Ինչպէս վերև յիշեցի, տեսնելով գերեզմանատան անհաշիւ ճակատի գրութիւնը, որտեղ մեր սիրելի և յարգելի ազգականները, բարեկամները և ազգակիցները մարմններն են ամփոփված, ուր ազգը ծախսել է մեծամեծ գումարներ և քրտինք թափել և որը դարձել էր մի աւերակ, սրբազան պարտք համարեցի այդ չարեաց առաջն առնելու: Ըստ չափու կարողութեան. ուստի նախ հանգստարանը չընկալաւ զբաղ ինչ որ ու կրից հոյակապ պարիսպով, չընկալաւ ինչ որ 2/3 մասը Աւելացան հանգստարանի արևելեան կողմում նոր հողեր, զետեղելով նորն պարսպի մէջ և այդ հողերը բաժանվեցաւ. կարգերի, կանոնաւոր ճանապարհներով, այնպէս որ իւրաքանչիւր գերեզման ունի աջ և ձախ ճանապարհներ, ծածկված խէճով: Նոր պարսպից հեռացվեցան երկաթուղու անոցը մեծ քանակութեամբ հողերը, պարսպի դուռը և ներսի կողմից չիփվեցան արևելք, պարիսպների ապահովութեան համար: Նորոգվեցան հին պատերը 38 սաժ. տարածութեամբ և կարկատվեցան հին պատերի մի քանի մասերը: Շինվեցաւ հանգստարանի զվաւոր մուտքի երկաթեայ դուռն և գերեզմանատան շուրջը ու զանազան ուղղութիւններով կարեւոր ճանապարհներ, լայնութեամբ առաւել քան 2 սաժ., տարածութեամբ 1368 քառ. սաժ.: Նոր ճանապարհները ծածկվեցան խէճով և աւաղով, տնկելով նրանց երկու կողմերը 1010 լիպայի ծառեր, որոնք իր ժամանակին ջրվում են Վուրի ջրով: Նորնպէս մը տաղարութիւն կայ շարունակել ծառերի տնկելը ինչպէս ամբողջ գերեզմանատան շուրջը, պարիսպներից կից, նորնպէս և արևելեան կողմում ձեռք բերած և կարգերի բաժանված հողերի վրա: Այսպիսով հանգստարանը իր բարեկարգ ճանապարհներով և բուսականութեամբ, ապագայում մեծ ծառայութիւն արած կը լինի բազմաթիւ Հաւաքարի բնակչաց, առողջապահական տեսակէտից, որից քաղաքի այդ մասը բոլորովին զուրկ է:

Վերոյիշեալ բոլոր բարեկարգութիւնները մոռցնելով, ժողովրդին տեղիք տրվեց բարեկարգելու իրանց սիրելիների գերեզմանները, դնելով նրանց վրա արձաններ, տապանաքարեր, չինելով վանդակներ և այլն, որոնք առաջվայ ժամանակներում անապահով էին: Թէպէտ վերոգրեալ բարեկարգութիւնները մոռցած են, այնու ամենայնիւ բոլոր ցանկալի կարգ ու կանոնները չի լինի իւրագործել, մինչև որ գերեզմանատան միւս մասը չը չընկալաւ ինչ որ պարսպով, իսկ այդ բանը մինչև այսօր մնացել է հանգստարանի հիւսիսային կողմի հողերի հարցի պատճառով, որոնք կարեւոր են և ձեռք բերել: Ոմանք կարող են մեղ հարցնել թէ՛ ինչ նշանակութիւն ունեն քարերի վրա դրված և գերեզմանների վրա դրած համարները, երբ կարող են բոլորովին անհետանալ. ի հարկէ, մի կողմից այդ հարցը չի լինի անտեղի, բայց մոռցնելով այդ, կամեցայ ժամանակաւորապէս միայն պահպանել և չը կորցնել գերեզմանների յետքերը, մինչև իրագործվել, ինչպէս վերև ասեցի, նախ գերեզմանատան մնացեալ պարսպի շարունակութեան աւարտվելը, երկրորդ, մեծ ճանապարհներից յարմարութեան համար նեղ ճանապարհներ բանալը, զանազան կարեւոր ճիւղերով և ուղղութիւններով: Այն ժամանակ ամբողջ գերեզմանատունը բաժանել մի քանի զվաւոր թաղերի, ցուցակադրել բոլոր հին թաղված հանգուցեալների ազգանունները, մոռցնելով նմանապէս մայր մատենի մէջ, իրանց համարներով: (այն ժամանակ գերեզմանները վերա դրած համարները կը փոխարինէին երկաթի) այնպէս որ պահանջված դէպքերում կարելի լինէր ազգականաց և բարեկամաց խնդրութեամբ ցոյց տալ իրանց սիրելիների գերեզմանները, որոնք մայր մատենից և ընդհանուր մակարդակից կերևան, որ հանգուցեալը այս կամ այն թաղումն է թաղված և այս ինչ համարաւ: Գրանցով կը վերացվէին այն բոլոր անյարմարութիւնները, որոնք մինչև այսօր շարունակվել են, որին. նոր գերեզմանի համար շատ անգամ փո-

փում են մի և նոյն տեղերը, դուրս ածելով հանգուցեալի ոսկորները և երբեմնապէս անգիտակցաբար բացվում են թաղվածների դիակները:

Յետ բաժանման ամբողջ գերեզմանատունը թաղերի, մի քանի կենտրոններում չինել հսկող պահպանների համար դիտողանալներ, որոնք միմեանց հետ ունենան յարակցութիւն թերի միջնորդութեամբ, որ պէտք եղած ժամանակին կարողանան հեշտութեամբ տեղեկացնել միմեանց գերեզմանատան մէջ պատահած անկարգութիւնները հեռացնելու: Իւրաքանչիւր թաղի պահապանը, բացի գերեզման փոքրը, պարտաւոր կը լինի անվնաս պահպանելու, նորնպէս և մաքրելու իր թաղը: Գերեզմանատան ճանապարհները վրա դարձել չուզուէ՛ն նստարաններ և ճանապարհների մի քանի կենտրոններում, չուզուէ՛ն սիւների վրա կայցնել կարգ ու կանոնների ամենակարեւոր հետեւալ մի քանի քաղաքացիներ, այցելող ժողովրդի համար. որին. այցելողները կարող են մտնել գերեզմանատուն ամբողջ օրը, մինչև երեկոյան որոշ ժամը, չը մանցալ գերեզմանների վրա, չը պոկել բոյսերը և այլն:

Յետ այնորիկ կը հրաւիրվին հանգուցեալների տէրերը իրանց հանգուցեալների ծոված տապանաքարերը ուղղելու, իսկ որոնք չունեն գերեզմանի վրա քարեր, անկարգ կիտված հողերը չինել կանոնաւոր և վայելուչ ձևով: Այսպիսով գերեզմանատունը կը ստանայ վայելուչ և բարեկարգ դրութիւն: Եւ այսպէս, ամեն տեսակ վնասակար արգելքները հեռացնելով, գերեզմանները կը դառնան ծաղկանոցներ, ինչպէս վայել է բարեկարգ ազգերին:

Գերեզմանատան արևմտեան կողմը, փողոցի վրա չինել կրպակներ, այնպէս որ հանգստարանին նայող ետևի պատը լինի խուլ և բոլորովին չունենայ յարակցութիւն գերեզմանատան հետ. չինութեան բոլոր երկայնութեան մէջտեղը թողնել մեծ դուռն, իսկ նրա դիմէն, դիտողանալներին մինը, որոնց մասին արդէն վերել յիշեցինք, այդպիսով փողոցի վրա, դրան աջ և ձախ, կը գոյանան տասն կրպակաքարեր, որոնց իւրաքանչիւրի վարձը միջին թուով հաշուելով ամսական 5 լուբրի, գերեզմանատունը ուղքին նեղութիւն չը տալով կունենայ տարեկան մուտք 600 լուբրի:

Վերոգրեալ թէ չինած և թէ չինել բարեկարգութիւնները մի առ մի թելելով, աւելորդ չեմ համարում և յիշել թէ՛ ներկայացրած հաշիւց երեքեցաւ, որ չորս տարեկան ընթացքում մուտքից բացի կառավարչին և երեք սպասաւորաց տուած 3415 ռ. ռոճիկը, իրագործվել են և վերոյիշեալ դանազան բարեկարգութիւնները: Ուրեմն եթէ որ արանից առաջ 10 կամ 20 տարեկան ընթացքում ձեռք բերած արդիւնքները դորձադրվին նոյն հանգստարանի վրա, այսօր մեր ձեռնարկածը չէր լինի սկիզբ բարեկարգութեան և հանգստարանը իր ծաղկեալ դրութեամբ, ինչպէս վերև ասեցինք, կարող էր մեծ օգուտ տալ Հաւաքարի բնակիչներին և այնուհետև նրա արդիւնքներից կարելի էր մի աղքատանոց հիմնել:

Այսպէս ղեկավարելով ցանկութեամբ դեղեցիկ և յարմար դիքը տալու մեր հանգուցեալ սերնդից յիշմոռալարանին, արեցի ինչ կարողացայ և յայտնեցի մի առ մի այն, որ ցանկալի էր իրագործել և ապագայում: Այժմ մնում է ցանկալի դէպս յաջորդ այլ կառավարչին աւելի ճարտարութիւն և աւելի յաջողութիւն, այդ յարգանաց արժանի տեղին տալու այնպիսի կերպարանք, որով նա եթէ ոչ ի շարս նշանաւոր գերեզմանատների բարեկարգութիւններում, գէթ թիֆլիսում առաջին տեղը լռնէ հանգստարանաց շարքում և պատիւ բերէ թիֆլիսի հայ հասարակութեան, վերկայելով սրա ընտիր ճաշակին և յարգանաց ըզգացմունք դէպի իր նախնի հանգուցեալների յիշատակը:

Իմ խորին շնորհակալութիւնը յայտնում եմ բոլոր նուիրողաց և թիֆլիսի արժանապատիւ հոգևորականաց, որոնք միշտ օգնել են այս առբը և նուիրական դործին, մինչև անգամ չեն խնայել իրանց լուսնները, ինչ որ ներքինը ներդրութիւն բոլոր նուիրողներից, յայտնեմ հանգստարանի բարեկարգութեան, որ աղգանուցը չը կարողացանք սպաղրել մի առ մի, բայց և աւելորդ չենք համարում, եթէ ցանկացողները բարեհաճէին տեղեկանալ ի ստուգութիւն թէ՛ արդեօք մտքում են անդորրադրական և մայր մատենին մէջ իրանց աղգանուցները և նուիրած գումարները թէ՛ ոչ: Ինչ վերաբերում է հանգստարանի շուրջը թէ՛

չինած նոր պարսպի և դրա տեղիւ եղած ժողովարարութեանց մանրամասն հաշուի, որը սկզբից և եթ ղեկավարել է մեծապատիւ պ. Յարութիւն Յովհաննէսեան Շամարեանցը, պատիւ կունենայ

իր ժամանակին լրագրութեանց միջոցով ներկայացնել հայ հասարակութեանը:

Հոգաբարձու Միքայէլ Սալամբէկեանց

Գրիգոր Տէր-Թադէոսեան ԽՕՋԱԼԵՒԱԹԵԱՆՅ, Ովսաննա և ամուսին սորա Սարգիս ՍԱՐԵԱՆՅ, առաջին երկուսը իրանց հօր և երրորդը իր աներոջ, վանքի Մայրեկեղեցու ԹԱԴԵՆՍ ԱՒԱԳ ԲԱՀԱՆԱՅ ԽՕՋԱԼԵՒԱԹԵԱՆՅԻ մահը ցաւօք սրտի յայնելով բարեկամներին, ազգականներին և ծխական ժողովրդին խնդրում են շնորհ բերել այսօր ժամը 10-ին վանքի Մայր-եկեղեցին, թաղման կարգակատարութեան:

1—1

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ և շուտով լոյս կը տեսնի

«Ս Ո Ւ Ս Ա Կ»

ԼԻԱԿԱՏԱՐ ԵՐԳԱՐԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԻ ՀԱՏՈՐԸ

Իւրաքանչիւր օրինակի գինն է, կանխիկ բաժանորդ գրվողների համար ՄԻ ԲՈՒԲԼԻ:

Ցանկացողները կարող են բարեհաճել դառնալ Բ ա դ ու «Ս Ո Ւ Ս Ա Կ ի» հրատարակչի Գրիգոր Կահանայ Գրիգորեանցին, հետեւալ հասցեով. Священнику Григорию Григоряпцъ, въ Баку.

1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻԻՆԸ ստանով յայտնում է, որ յունիսի 4-ին, ներկայ թիւի, ժամը 12-ին (կէսօրին) վարչութեան ներկայութեամբ, կատարվելու է աճուրդ՝ կապալով տալու քաղաքին 1941 հատ փողոցային լապտերների ֆոթոգէնով լուսաւորելը: Կապալի ժամանակամիջոցը տեւելու է ներկայ տարեկան 30 ԱՊՐԻՍԻ 4-ից սկսած՝ 2 տարի ժամանակով: Կոնդիցիաները կարելի է տեսնել քաղաքային Ուպրավայի տեսանում ամեն օր, մինչև 2 ժամ կէսօրից յետոյ, բացի տօն օրերից:

1—3

Ձեռնարկ «ԿԵՖԻՐ ԿԱՄ ԿՈՎԿԱՍՏԱՆ ՍՆՆԳԱՐԱՐ ԽՄԻՉԲ պատրաստելու համար: Փոխ. պրօֆ. օգն. Արտեմ Թադէոսեան: Գինն է 15 կօպէկ:

ԹԻՖԼԻՍՈՒՄ պահեստը—Կենտրոնական Գրախնայարկային, ԵՐԵՎԱՆՈՒՄ Գատաւանի խանութում:

1—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, մայիսի 27-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMÉNIE) շոգենաւը, նաւապետ ՇԵՈՒՏ (SCHEULT) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կի, Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնները մոտին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօսին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արժուռի գալլերէում, № 103.

3—4

Գ. ԿԵՐԵՐԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ

Հերոֆոնների ֆարրիկայի միակ ազնաւի մօտ, Կովկասում, Միքայէլեան փողոցում, № 84, ստացված են մեծ քանակութեամբ

ՀԵՐՈՓՈՆՆԵՐ

Կատարելագործված, դուրեկան ձայնով, նորնպէս լաւ ընտրութիւն նոտաների Հերոֆոնի համար: Օտարաքաղաքացիների պահանջները ճշգրտութեամբ և առաջին փոստայով են կատարվում: Նոտաների կատարողները թէ Հերոֆոնների և թէ Արիստոնների համար, ըստ պահանջման ուղարկվում են անվարձ:

8—20

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ

ՍՈՒՂԻԱԿԻ ԱԲԲԱՅՈՒԹԻՒՆՅ (GIRONDE)

Ատամների համար Բենեդիկտեան հայերից պատրաստած էլիկսիրի ամենօրեայ գործածութիւնը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահպանում է ատամները վնասաւոր, սպիտակ է դարձնում և պնդացնում է ատամները, մաքրում է և պահպանում է ծնողը:

Գինը դրանք 2 և 8 ֆրանկ. ֆօշին՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պատա՛ արկղիկը 2 ֆրանկ:

Հիմնաւորված դոկտորներ ունի 1804 թվից. Գլխաւոր ազնաւոր SEGUIN, Բօրդօ (Ֆրանսիա). ԹԻՖԼԻՍՈՒՄ ծախվում է պ. Բերլանդի մագաղիմում և պարֆիւմէրների ուրիշ մագաղիմներում: Վ.Լ.Ա.Դ.ԿԱՍՍՈՒՄ. Է. Ա. Էնկէնի և Գ. Ա. Օտիւլի մօտ:

21—48 (ե. չ.)